



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, [ss@ysmu.am](mailto:ss@ysmu.am)

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 6  
ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Միութար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, «Երևանի Միութար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) գիտական խորհուրդը.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից ներկայացված 2019-2022թթ ընթացքում կատարված աշխատանքները գնահատել բավարար (հաշվետվությունը կցվում է) (23-04-06-01).
2. Հավանություն տալ 2023 – 2026 թվականների ընթացքում կլինիկական ոլորտում իրականացվելիք հետևյալ ծրագրերին՝
  - 1) «Թվային համալսարան» նախագծի շրջանակներում «Թվայնացված կլինիկայի» ստեղծմանը (23-04-06-02).



2) Նոր ծառայությունների ստեղծման և առկա ծառայությունների զարգացման, համալսարանական կլինիկաների վերազինման աշխատանքներին (23-04-06-03).

3) «Մուրացան» հիվանդանոցային համալիրի բազայի հիման վրա Մանկաբուժական դպրոցի ստեղծմանը (23-04-06-04).

3. Մինչև 2025թ-ի ավարտը միասնական լաբորատորիայի ստեղծմանը (23-04-06-05).

4. Դիմել ռեկտոր Ա.Մուրադյանին՝ հանձնարարելու ընդհանուր վերահսկողության վարչությանը՝ իրականացնելու ուսումնասիրություններ թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 ստոմատոլոգիական պոլիկլինիկաներում և ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոնում՝ դրանց գործունեության արդյունավետության, ուսումնական ծրագրերի իրականացման և կլինիկական գործունեության տեսակետից: Ուսումնասիրությունների ավարտից հետո գիտական խորհրդին ներկայացնել առաջարկություններ սույն կետում նշված ստորաբաժանումների հետագա գործունեության կազմակերպման վերաբերյալ (23-04-06-06).

5. Հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի օտարերկրացի դիմորդների ընդունելության մասին կանոնակարգի փոփոխությունները (կցվում է) (23-04-06-07).

6. Հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ընդհանուր բժշկության ֆակուլտետի գործունեության կանոնակարգի լրացումները (կցվում է) (23-04-06-08).

7. Հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ստոմատոլոգիական ֆակուլտետի գործունեության կանոնակարգի լրացումները (կցվում է) (23-04-06-09).

8. Հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի դեղագիտական ֆակուլտետի գործունեության կանոնակարգի լրացումները (կցվում է) (23-04-06-10).



9. Հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ակադեմիական անձնակազմի մասին կանոնակարգի փոփոխությունները՝ նոր խմբագրությամբ (կցվում է) (23-04-06-11).

10. Հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և հաստատման կարգը (կցվում է) (23-04-06-12).

11. Հաստատել ուսման վճարի չափերի մասին կանոնակարգի փոփոխությունները (կցվում է) (23-04-06-13).

12. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը, մանկաբուժության թիվ 2 ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ Գայանե Գևորգի Ամարյանին շնորհել պրոֆեսորի և հանրային առողջության և առողջապահության կազմակերպման ամբիոնի դոցենտ Լուսինե Մարսելի Դանիելյանին՝ դոցենտի գիտական կոչումներ և սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը (կցվում է) (23-03-04-14).

13. Սույն որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏԱՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ

